Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(22 մարտի, 2015 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զայն Տեառն որ հատուցանէ
զհատուցումն հակառակորդաց»
(Եսայի ԿԶ. 6):

Սիրելի՛ քոյրեր եւ եղբայրներ,

Այսօր Մեծի Պահոց վեցերորդ կիրակին է: Նախորդ շրջանում մենք վերապրեցինք հինգ կիրակիների իրադարձությունները. Բուն Բարեկենդանի նախամեղանչական մարդու ուրախությանը հաղորդ դառնալով, խորհրդածելով մարդու՝ դրախտից արտաքսման պատճառների շուրջ, այնուհետեւ անդրադառնալով դեպի դրախտ վերադառնալու նրա ճիգերին, որն ամփոփված էր «Անառակ որդու» առակի մեջ, ապա հաղորդ դարձանք տնտեսի գործերին, որը ջանք չէր խնայում իր հնարամտությունները գործադրելու միջոցով հաճոյանալ տիրոջը: Նախորդ կիրակի անդրադարձանք «Անիրավ դատավորի ու այրի կնոջ առակին», որտեղ թիրախավորված էր համառ ու հետեւողական աղոթքը: Այսօր մի տեսակ ամփոփումն է այդ բոլոր իրադարձությունների, եւ մեր խորհրդածական հայացքները սեւեռված են լինելու այդ ամենի հանրագումարին՝ վերջին գալուստին: Վերջին գալուստի մասին Ավետարանը չափազանց սակավախոս է: Երբ այդ մասին խոսակցություններ են լինում, Քրիստոս ասում է, որ ոչ ոք չգիտի դատաստանի օրը, եւ պարզապես բավարարվում մի քանի նշաններ փոխանցելով. այդ օրերին կլինի սով, սրածություն, պատերազմներ, եղբայրը եղբոր դեմ կլինի, պետությունը՝ պետության, արեւելքից լույս կփայլատակի, եւ Մարդու Որդին, այսինքն՝ Ասված, Իր խաչի նշանով պիտի երեւա լուսավոր ամպերի վրա: Այսքանը գիտենք վերջին գալուստի մթնոլորտի եւ միջավայրի մասին: Ինչ վերաբերում է Քրիստոսի երկրորդ գալուստին, շատ միանշանակ է, որ այդժամ լինելու է հատուցում. ինչպես Սուրբ Գիրքն է ասում, նրանք, ովքեր բարիք գործած կլինեն, կարժանանան հավիտենական օրհնության, իսկ նրանք, ովքեր ամբարիշտ կհամարվեն՝ հավերժական անեծքի: Այսինքն՝ վերջին գալուստի խորհրդածությունների հիմքում ընկած է հատուցման գաղափարը: Այդ իրադարձությունը Սուրբ Գրքում

ներկայացված է որպես համապիեզերական իրադարձություն. եթե արարչագործությամբ սկսվում է փիեզերքի պատմությունը, ապա վերջին գալուստով այն պիտի ավարտվի: Քրիստոսի երկրորդ գալստյան մասին շատ են խորհել քրիստոնյաները, եկեղեցու հայրերը, բոլոր նրանք, ովքեր կրոնական ապրում ունեն: Հաճախ վերջին դատաստանը մի սարսափազդու տեսարանով է նկարագրվում: Ասում են՝ մարդիկ պետք է հարություն առնեն, որպեսզի դատապարտվեն: Եւ ձեւավորվում է կարծեք մի սխալ տպավորություն. բավարար չէ, որ մարդիկ այս աշխարհի վրա հիվանդանում են, տառապում, ենթարկվում բազմաթիվ փորձությունների, այլ Աստված այնքան դաժան է, որ մահվանից հետո մարդկանց հարություն պիտի տա եւ դատաստանի ենթարկի, տանջի, նրանց ատամների կոճտոցը, լացն ու կոծը պիտի լսվի, ինչպես դժոխքի պատկերը ներկայացված է Ավետարանում: Բայց ուղղափառ ընկալման մեջ բացարձակապես չի տեղավորվում Աստծո՝ դաժան ու վրեժխնդիր լինելու գաղափարը: Վերջին գալուստի եւ հատուցման գաղափարն ընդհամենը մեզ հիշեցնում է՝ լավ իմացեք այն ամենը, ինչ որ դուք կատարեք այսօր այստեղ, արձագանք է գտնելու հավերժության մեջ. եթե գտնվեք բարեգործ, հավատարիմ՝ Աստծո պատվիրաններին, բնականաբար, պիտի ժառանգեք օրհնություն, իսկ եթե ամբարշտություն գործեք, ձեր իսկ ամբարշտությունը՝ որպես վկա, ներկայանալու է Տիրոջ վերջին դատաստանի ժամանակ:

Այսօր մենք Աստվածաշնչի ընթերցումներով ներկայացրեցինք այն նյութը, որի շուրջ պիտի խորհրդածենք: Ընթերցեցինք Եսայու մարգարեության ԿԶ. գլխից մի հատված: Խոսելով մարդկանց գործերի մասին՝ Եսայի մարգարեն ասում է, որ կարեւորը Աստծո հանդեպ մարդու հնազանդությունն է եւ խոնարհությունը: Ցուցամոլությունը, կեղծ բարեպաշտությունը ոչնչով չեն կարող օգնել մարդուն՝ հավելելով. «Բայց անօրենը, որ ինձ եզ է զոհաբերում, նույնն է, թե մարդու գանգ է ջախջախում, իսկ նա, որ ոչխար է զոհաբերում, նույնն է, թե շուն է մորթում» (Ես. ԿԶ. 3): Այսինքն՝ վերջին դատաստանին հաշվի է առնվելու ոչ թե այն, թե մենք ինչ ընծաներ ենք մատուցել Աստծուն մեր բարեպաշտությունն ի ցույց դնելու համար, այլ թե իրականության մեջ ինչպիսի հավատարմություն, վստահություն, ինչպիսի խոնարհություն ենք դրսեւորել Աստծո նկատմամբ, որն է եղել մեր գործը: Եւ այս կիրակի օրվա հատուցման գաղափարի շեշտադրումը գալիս է ամփոփելու Մեծ Պահքի մեր խորհրդածությունները՝ հիշեցնելով, որ այս շրջանով չսահմանափակվեց: Մենք մշտապես կենտրոնացած պիտի լինենք հատուցման գաղափարի վրա: Դուք, անշուշտ, տեղյակ եք մարդկանց կողմից հաճախ օգտագործված բումերանգի պատկերին: Կա մի գործիք, որը, երբ նետում ես, վերադառնում է: Մարդու գործը եւ խոսքը նման է հենց այդ «զենքին»: Հատուցման գաղափարը նման է հենց բումերանգի շարժմանը: Երբ մենք գործ ենք կատարում, Աստված ասում է, որ այդ գործը մշտապես վերադառնալու է: Եւ Հին Կտակարանում այս պատկերը երբեմն խիստ է ներկայացված: Ասում է՝

նրանք, ովքեր ամբարիշտ կգտնվեն, մինչեւ յոթը սերունդ կդատապարտվեն: Իսկ նրանք, ովքեր հնազանդությամբ, խոնարհությամբ կծառայեն Աստծուն, նրանք յոթը սերունդ օրհնություն պիտի ստանան: Դրա համար մենք, եթե անգամ Աստվածաշնչին ծանոթ չլինենք, աստվածաբանական կրթություն չունենանք, տեղյակ ենք հաճախ մեր անձնական փորձառությունից, որ մեր կատարած այս կամ այն գործը մշտապես վերադառնում է իր հետեւանքով: Այս հավատքն է, որ մեր ժողովրդական առածով ասել է տալիս, թե այն բարիքը, որ դու այսօր գործում ես, թող քո զավակների առջեւ գա: Այսպիսով՝ բարության ու չարության շղթայականությունը սերտորեն առնչվում է մեր կրոնական ապրումի հետ:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, կարծում եմ, որ այս խորհրդածությունը չափազանց կարեւոր է պահեցողության, կրոնական ապրումի մեջ. մշտապես պետք է հիշենք ու կենտրոնանանք այն գաղափարի վրա, որ այն ամենը, ինչ անում ենք, հավերժության մեջ արձագանք է գտնելու, անդրադարձ է ունենալու մեր եւ մեր զավակների կյանքում՝ մինչեւ յոթ սերունդ: Ուրեմն՝ այսօրվա պատգամը հետեւյալն է՝ յուրաքանչյուր անձ պարտավոր է հիշել, որ մի օր ինքը պատասխան է տալու իր արարքների համար: Պատասխան կարող է լինել մարդկանց կամ սեփական խղճի առջեւ: Եթե անգամ մարդն իր խղճի առջեւ պատասխան չի տալու, ապա անպայման պատասխան է տալու Աստծո առջեւ: Երկրորդ՝ այս պատասխանատվությունը մեզ ներշնչելու է, որ մշտապես առաջնորդվենք մեր անձնական պատասխանատվության գիտակցումով: Մենք չենք կարող վկայակոչել այս կամ այն անձին՝ ասելով՝ ահա նա այսպես վարվեց, ուրեմն՝ ես եւս կարող եմ նրա նման վարվել: Հիշո՞ւմ եք այսպիսի մի դեպք: Երբ Ադամը դրախտում պտղից ճաշակեց, եւ Աստված հարցրեց, թե նա պտղից ինչո՞ւ ճաշակեց, նախահայրը վկայակոչեց Եւային: Արդյո՞ք Եւայի կողմից պտղի ճաշակումը իրավունք էր տալիս Ադամին նույն կերպ վարվելու:

Մեր արածների համար ինքներս ենք առաջին հերթին պատասխանատվություն կրում, ուստի պետք է հիշել պատասխանատվության մասին, եւ այդ պատասխանատվությունը կրելու ճանապարհին երբեք ու երբեք չվկայակոչել ուրիշներին: Ամեն մեկս՝ որպես առանձին անհատ, ինքներս ենք պատասխան տալու թե՛ մարդկանց, թե՛ մեր խղճի եւ թե՛ Աստծո առջեւ: Մաղթում եմ, որ այս պատասխանատվության գաղափարը անմար լինի մեր մտածումների մեջ, որպեսզի երբ վերջին դատաստանի ժամանակ, հարությունից հետո Աստծո առջեւ կանգնենք, մեր արատները, ամբարշտությունները մեզ հետ չառերեւվեն, այլ առերեւվեն մեր բարեգործությունները, հավատարմությունն Աստծո նկատմամբ, մեր բարեպաշտությունը, սերը մարդկանց եւ Աստծո նկատմամբ՝ այժմ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: